

ի բեմն ծանուցանել ժողովրդեան թէ Այսպէս բան աւարեալ են մէկ քանի ոգի, եւ այս ո՞րպէս քրիստոնէութիւն է կամ ի՞նչպէս հաւատ է. ապա դուք ի՞նչ էք եկեր յեկեղեցիս. եւ ժողովուրդն միաձայնեալ թէ Ո՞վ է. եւ նա ծանուցեալ թէ Մին ի տեղս չար կարապետ երէցն է եւ մինն Թէրզին է, որ են եւ կախարդք, որ պարտ չէ այժմ պատարագ մատչել, որ այսպիսի մոլորութիւն կայ: Եւ նոյնժամայն ժողովուրդքն յարձակմամբ գիմեն ի վերայ պիղծ Թէրզուն եւ այնչափ գանեն, մինչեւ անշնչանայ. եւ զչար կարապետն ըմբռնեալ՝ թէ գանենք, յառաջագոյն խոյս տայ եւ մտնէ ի պահարանն եւ դոցէ զդուռն, եւ ժողովուրդն շատ պահեալ զճանապարհ նորա, ոչ երեկ արտաքս, եւ նոքա ցրուեցան մի մի. ժամն եւ պատարագն խաւփանեցաւ: Եւ յայն ժամու բարկութեամբ լցեալ Մարտիրոս վարդապետն եւ նստեալ ի նաւ՝ անցեալ յայն կոյս երթալով ի Պուռսա առ Աստուածատուր վարդապետն. միթէ Աստուած յառաջացուցէ:

Եւ օրս ի յՈսկիւտարն Թաղէոս¹⁾ վարդապետն թէսքէրէոյն մեր Վարդապետին Դ երէց աւրհնեաց, մէկն՝ յՈսկիւտարու Տէր Յովանէսի որդին, մէկն՝ յԱստուածածնայ (Կարապ), մէկ՝ Սուրբ Նիկողոսոս Դայսէրցի, եւ մէկն՝ մեր Յարութիւնն սապատօղ, որ մի թէմէսուկ ետուր Տէրտէրիս թէ Որչափ ժողովուրդ լինի Զիմառցի, նա՛ օրթախ լինիմ հետ Տէր Մարտիրոսին մինչեւ ի մահ. վասն այնորիկ տէրութիւն արաւ Տէրտէրս եւ աւրհնել տւաք եւ եղաք զանունն Տէր Պետրոս: Եւ զի բազում ժողովուրդ կայր Զիմառցի Էսիլին եւ Մէսիլին, վասն չարութեան նոցա մահնեքեան զըզուեցան եւ եկեալ զայս նորընծայ ուղեցին մինչեւ Լ արանց առաջի Եւ զիազար վարդապետին: Եւ առաւօտուս զնացի ի տուն

1) Թաթէոս.